

**ՅԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԶԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀՀ-ՈՒ**

Հարկային քաղաքականության արդյունավետությունը կարելի է, առաջին հերթին, բնութագրել ստվերային տնտեսության չափերի տեսանկյունից: Ստվերային տնտեսության հիմնական բնութագրիչները ոչ միայն հարկման դաշտից դուրս գործող սուրյեկտների ֆինանսատնտեսական հարաբերությունների միջոցով ձևավորված շրջանառությունն ու դրանց արդյունքներն են, այլ նաև մրցակցային և ներդրումային հարաբերությունների խեղաքյուրումը:

Գոյություն ունեն ստվերային տնտեսության բազմաթիվ սահմանումներ: Այսպես, ստվերային տնտեսությունը չգրանցված ազգային եկամուտն է, որը հաշվարկվում է որպես շրջանառության մեջ գտնվող փողին համապատասխան «այտենցիալ» ազգային եկամուտի և գրանցված ազգային եկամուտի տարրերություն: Ստվերային տնտեսությունը սահմանվում է նաև որպես ապրանքների և ծառայությունների շուկայական արտադրություն, օրինական կամ անօրինական, որը չի ներառվում ՀՆԱ հաշվարկում:

Վերոհիշյալ սահմանումները փոքր-ինչ տարրերվում են միմյանցից, սակայն գաղափարը նույնն է. ստվերային տնտեսությունը կառավարության վերահսկողությունից դուրս է:

Ստվերային տնտեսության չափի որոշումը բավականին քարդ է, և չնայած գոյություն ունեն ստվերային տնտեսության գնահատման մի քանի մերոդներ, պետք է նկատի ունենալ, որ ցանկացած մերոդով հաշվարկված ստվերային տնտեսության չափը ճշգրիտ չէ: Վերջինս պատահական չէ, քանի որ հաշվարկվում է այն տնտեսվարող սուրյեկտների իրականացրած գործունեությունը, որոնք ցանկանում են աննկատ և չգրանցված մնալ: Ստվերային տնտեսությունն իր հերթին կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝

1. ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է պետական մարմիններում կաշառակերության և հովանավորչության առկայությամբ,
2. ստվերային տնտեսություն, որը պայմանավորված է որոշ «հնարամիտ» տնտեսվարող սուրյեկտների կողմից, առանց հարկային մարմիններին կաշառք վճարելու, հարկերից խուսափելու կարողությամբ:

Երկրորդ խումբն, իհարկե, անհամենատ ավելի քիչ է տարածված, քան առաջինը:

Ստվերային տնտեսության պատճառած վնասները չեն սահմանափակվում միայն նրանով, որ այդ գումարները չեն մտել պետական բյուջե և չեն ծախսվել սոցիալական կամ երկրի պաշտպանումակության բարձրացման նպատակով: Կա ևս մեկ, ոչ պակաս կարևոր խնդիր, օրինակ՝ տնտեսական բոլոր գործընթացների աղավաղումը, ինչը երկարաժամկետ հատվածի համար ավելի վատ արդյունքների կարող է հանգեցնել քան ուղղակի կորուստներն են: Խնդիրն այն է, որ տնտեսությունում ոչ բոլորն են հավասարապես օգտվում հարկերից խուսափելու «արտոնությունից», և նաև, ով կարողանում է ավելի շատ խուսափել, հայտնվում է հատուկ արտոնյալ դիրքերում և սկսում է դուրս բռնել մյուս գործարարներին՝ գրավելով շուկան:

Հնարավոր է, որ այդպես են ձևավորվել Հայաստանում տարբեր ոլորտներում մոնոպոլատական դիրք գրավող շատ խոշոր բիզնեսներ: Եթե մանր կաշառակերության միջոցով շատերը կարող են «օգտվել» հարկերն ամրողությամբ շվճարելու հնարավորությունից, և այլուեղ, ասես թե, «հավասարակշռություն է ձևավորվել», խնդիրն էականորեն քարդանում է, եթե քարձը հովանավորչության արդյունքում որոշ գործարարներ սկսում են գերիշխող դիրք գրավել: Հարկերից խուսափումը հաջողակ գործարարի համար նույնն է, ինչ որ պետությունից աջակցություն ստանալը: Փաստորեն ստացվում է, որ պետությունն «արտոնյալ» գործարարներին յուրաքանչյուր տարի կրներետ գումար է տալիս, որը նպաստում է նրանց գործունեության ընդարձակմանը, և ինչքան մեծ է հարկերից խուսափումը, այնքան ավելի շատ է աջակցությունը: Այն կոչվում է «տնտեսական աղավաղումներ», քանի որ գործարարները բաժանվում են աջակցություն ստացող և աջակցություն չստացող խմբերի: Աջակցություն

շստացող գործարարները հրաժարվում են ներդրումներ անելուց, կապիտալ երկրից դուրս է հոսում, որի արդյունքում տնտեսությունը չի զարգանում իր ներուժին համարժեք:

Դետության կողմից հարկային դրույքաշափերի բարձրացումն ինքնըստինքյան խթանում է հարկային պարտավորություններից խուսափելը: Եթե հարկերը բարձր են, նվազում է նաև քաղաքացու քարեխնդրությունը, այսինքն՝ տնտեսվարող այն սուրյեկտները, որոնք ցածր հարկերի պայմաններում պարտաճանաչ մուծում էին հարկերը, հարկային բեռի մեծացման դեպքում գերադասում են հարկերից խուսափելու միջոցով, թեկուզ մասամբ, թերևացնել հարկային պարտավորությունների իրենց բեռը: Հարկային բեռի բարձրացումը կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով, մասնավորապես հարկային դրույքաշափերի բարձրացմանը: Ըստ Արթուր Լաֆֆերի՝ հարկային դրույքաշափի բարձրացման դեպքում հարկային եկամուտները սկզբում աճում են, իսկ հետո՝ ինչոր կետից սկսած, նվազում ավելի բարձր դրույքաշափերը զարդարում են տնտեսական աճը (նվազում են խնայողությունները, ներդրումները, սպառումը և այլն), հետևաբար՝ կրճատվում է հարկային բազմությունը: Ուստի նույնիսկ հարկային դրույքաշափերի աճի դեպքում հարկերի գումարը նվազում է: Հիմնական խնդիրն այն է, որ իրականում դժվար է պարզել, թե Լաֆֆերի կորի որ մասում է գտնվում տնտեսությունը: Բացի այդ, հարկերի ազդեցությունը կախված է նաև հարկային դրույքաշափերի նկատմամբ տնտեսության զգայունությունից: Այսպես, օրինակ՝ դժվար է միանշանակ պնդել, որ եկամտահարկի դրույքաշափի նվազեցման արդյունքում մարդիկ կսկսեն ավելի շատ աշխատել, այլ ոչ թե կնախընտրեն հանգստանալ քանի որ այդ դեպքում ավելի քիչ աշխատելով կարելի է ստանալ նույն տնօրինվող եկամուտը:

Թերզարգացման բակարդմերի տեսաթյան համաձայն<sup>1</sup> յուրաքանչյուր հարկատու իր տնտեսական գործունեությունն իրականացնելիս անտեսում է դրա ազդեցությունը բարեփոխումների վերաբերյալ մնացած հարկատուների սպասումների, հետևաբար՝ հարկեր վճարելու նրանց դրական գործունեությունը կամ հարկերից խուսափելու ընտրությունը պահանջեն բարեփոխումներ, ապա այդ բարեփոխումների իրականացման հավանականությունը կիրար վճարելու առանձին տնտեսվարող սուրյեկտների հարկային պարտավորությունները կատարելու շարժադրությունը և կազդի նրանց քաղաքական դիրքորոշման վրա: Հարկեր վճարող առանձին տնտեսվարող սուրյեկտի եկամուտը կարող է աճել՝ հարկերը վճարող այլ տնտեսվարող սուրյեկտների քանակից կախված: Այսինքն, եթե հարկատուների գերակշիռ մասը վճարում է հարկերը, ապա ամեն մի հարկատուի ծեռնոտու է կատարել իր հարկային պարտավորությունները, իսկ եթե մեծամասնությունը փորձում է խուսափել հարկերից, ապա հարկատուին ծեռնոտու է իր հարկային պարտավորություններից խուսափելը: Արդյունքում՝ կարող են առաջանալ ցածր և բարձր մակարդակների հավասարակշռություններ, և պարտադիր չեն, որ շուկայական ուժերը տանեն վատ հավասարակշռությունից ավելի լավ հավասարակշռության<sup>2</sup>:

Մենք ենք նրանք, որ յուրաքանչյուր անհատ իրականացվող բարեփոխմանը կողմ կամ դեմ է լինում՝ կախված նրանից, թե ինչպես դա կանդրադառնա իր սեփական բարեկեցության վրա: Հարկատուների տնտեսական և քաղաքական որոշումները փոխկապակցված են. նրանք որոշում են վճարել հարկերը, թե՝ ոչ (տնտեսական որոշում), կողմ լինել բարեփոխմանը, թե՝ դեմ (քաղաքական որոշում): Հարկատուի տնտեսական որոշումն ազդում է նրա քաղաքական դիրքորոշման վրա: Այսպես օրինակ, եթե հարկատուն որոշում է խուսափել կամ մասամբ կատարել հարկային պարտավորությունները, ապա նա դեմ կլինի բարեփոխմանը, քանի որ դա կասահմանափակի հարկերից խուսափելու իր կարողությունները: Բացի այդ, եթե


<sup>1</sup> «Modern theory of underdevelopment traps», համաձայն որի տնտեսական գործակալների տնտեսական որոշումները հիմնարար են համարվում հարկային բարեփոխումների իրականացման համար, այսինքն՝ հարկատուների քանակից կախված հարկային պարտավորությունների կառարումը՝ հարկեր վճարել կամ հարկերից խուսափելը, դրական կամ բացասական ազդեցություն է ունենում հարկային բարեփոխումների իրականացման կամ չիրականացման դիրքորոշման վրա:

<sup>2</sup> Konstantin Pashev, "Corruption and Tax Compliance", Challenges to Tax Policy and Administration, Washington Journal – N1331# September- 2009. 32-36 p.

բավարար քանակությամբ հարկատուներ չպահանջեն բարեփոխում, ապա դրանց իրականացնելու հավանականությունը կնվազի, որի արդյունքում մնացած հարկատուների՝ հարկ վճարելու շարժադրիթները կնվազեն, և դա կազմի բարեփոխմանը կողմ լինելու նրանց որոշման վրա: Այստեղ հարկ է նշել, որ, ընդունելով հարկային բեռի ծանրության ազդեցությունը, տնտեսության ստվերայնության մեծացման առումով, պետք է միաժամանակ գիտակցել, որ հարկային բեռի խիստ կրճատումներից չի կարելի ակնկալել ստվերային տնտեսության կտրուկ փորքացում: Հարկային բարեփոխումներից, գործնականում, կարելի է սպասել միայն ստվերային տնտեսության ընդարձակման գործընթացի կասեցում կամ էլ, լավագույն դեպքում՝ պաշտոնական հատվածի որոշ չափով ընդլայնում: Հարկային բարեփոխումները պետք է զուգորդվեն ստվերային տնտեսության վրա ազդող այլ գործուների համանման փոփոխություններով՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատումը տեսանելի դարձնելու համար: Պետք է նշել մեկ այլ հանգամանք ևս. այստեղ գործում է նաև ստվորույթի ուժը, այսինքն՝ մարդիկ, ովքեր երկար տարիներ գործել են ստվերային ոլորտում, դժվար թե հարկային դրույքաշափերի կրճատումից ելնելով՝ փոխեն իրենց գործելակերպը (զծապատկեր 1):

Գծապատկեր 1

### Թերզարզացման քակարդների տեսության նկարագիրը



որտեղ՝

x-ը հարկատուների այն մասն է, որը դեմ է բարեփոխմանը,

θ-ը՝ հարկատուների տարբերակման պարամետրը, որը գտնվում է  $[\theta_{\min}, \theta_{\max}]$  միջակայքում և ցույց է տալիս հարկերից խուսափելու հարկատուների հնարավորությունը (ավելի բարձր θ-ի դեպքում հարկատուների՝ հարկերից խուսափելու հնարավորությունն ավելի բարձր է),

f-ը՝ հարկատուի միավոր ակտիվից ստացված եկամուտը,

t-ը՝ օրենքին համապատասխան վճարվելիք հարկի դրույքաշափը,

λ-ը՝ շվճարված հարկերի գումարը,

g-ը՝ բարեփոխման արդյունքում հարկերից խուսափելու հնարավորության նվազումը կամ հարկային վարչարությունը՝  $0 < \lambda < 1$ ,

N-ը և R-ը համապատասխանաբար նշանակում են բարեփոխումների բացակայություն և բարեփոխումների առկայություն,

g-ն ակտիվների եկամտաբերության աճն է, որը պայմանավորված է տնտեսության պաշտոնական հատվածում գործունեություն իրականացնելով, այսինքն՝ այս գործակցը ցույց է տալիս պաշտոնական հատվածում գործող հարկ վճարողի համեմատական առավելությունը ստվերային հատվածում աշխատողի նկատմամբ՝  $0 < g < 1$ ,

β-ն կառավարության ծախսերի կառավարման արդյունավետությունն է՝  $0 < \beta < 1$ ,


$$\int_0^\theta f(t)dt + \int_0^\theta f^*(t-t\theta)d\theta - \text{պետական բյուջեի հարկային եկամուտների ընդհանուր}$$

մակարդակն է:

Հավասարակշռությունը որոշվում է հարկատուների  $x$  մասով, որը դեմ է բարեփոխմանը: Եթե  $\theta$ -ն ունի հավասարաչափ բաշխում  $[0,1]$  միջակայքում, ապա հարկերից խուսափումների կորը կունենա ուղիղ գծի տեսք, ինչպես պատկերված է գծապատկեր 2-ում:

### Գծապատկեր 2


Հարկեր վճարելու և հարկերից խուսափելու ընտրությունը



Սահմանային կորի տեղաշարժը դեպի վեր, որը կարող է տեղի ունենալ, օրինակ՝  $\lambda, \beta, g$  պարամետրերի աճի կամ  $t$ -ի կրճատման պայմաններում, սկզբնական շրջանում կմեծացնի  $\theta$ -ը: Սակայն հարկերից խուսափողների՝ հարկերը վճարելու դեպքում ենթադրվում է նաև բարեփոխումներին դեմ տնտեսվարող սուբյեկտների քանակի նվազում, որն էլ իր հերքին լրացուցիչ խթանում է էլ ավելի բարձր  $\beta$ -ի ձևավորումը: Այսինքն՝  $x$ -ի և  $\theta$ -ի բացասական կապը հանգեցնում է այդ պարամետրերի նախնական փոփոխությունների բազմապատկի արդյունքի առաջացմանը, ինչը ցույց է տրված գծապատկեր 3-ում:

### Գծապատկեր 3

Քաղաքական միջակայրի ազդեցությունը հարկային բարեփոխումներ իրականացնելիս



Ֆինանսների նախարարի կողմից գնահատված պաշտոնական տվյալների համաձայն՝ սովերային տնտեսությունը 2009թ. կազմել է 25-30%<sup>1</sup>, ապա 10%-ի կրճատման հաշվին հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 16.2%-ից կարելի է հասցնել մոտ 31.2%-ի: Ստացվում է, որ

<sup>1</sup> www.armbanks.am/hy/ստվերային տնտեսություն:

ստվերային տնտեսության 10%-ով նվազումը **հարկեր/ՀՆԱ** հարաբերակցությունը 2%-ային կետով ավելացնում է: Այլ խորով՝ ստվերային տնտեսության յուրաքանչյուր 1%-ով կրճատումը **հարկեր/ՀՆԱ** հարաբերակցությունը կավելացնի 0.2 տոկոսային կետով (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**Հարկերի և ստվերայնության վերլուծական գնահատականը**

Ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Հարկային եկամուտներ, մլրդ դրամ	152,6	168,8	198,6	227,4	267	321,5	385,1	505,0	598,8	503,3
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	1031,3	1175,9	1362,5	1624,6	1907,9	2242,9	2657,1	3139,4	3646,1	3165,5
Հարկեր/ՀՆԱ, % (պաշտոնապես հրապարակած)	14,8	14,4	14,6	14,0	14,0	14,3	14,5	16,1	16,4	15,9
Հարկեր/ՀՆԱ, % (հաշվի առաջ ստվերայնությունը)	29.6	28.8	29.2	28	28	28.6	29	32.2	32.8	31.8

Չատ դեպքերում ստվերային տնտեսությունում գործող տնտեսվարող սուբյեկտները, ուղղակի ծանոթ չինելով հարկային և մաքսային օրենսդրությանը, չափազանց «քարդ ու քանկ» են համարում տնտեսության պաշտոնական հատվածում գործունեություն իրականացնելը: Հաճախ համապատասխան վերահսկող մարմինների ներկայացուցիչներին անօրինական վճարումներ և կաշառք տալու ճանապարհով նրանք շրջանցում են պետական մարմիններին, չեն գործում օրենքով սահմանված կարգով՝ կարծելով, թե ի վիճակի չեն պահպանել ներկայացվող պահանջները:

Ամեն դեպքում, հարկային գործող օրենսդրությամբ սահմանված հարկային համակարգը գնահատելու համար, պետք է նախ աշխատեցնել այդ համակարգը, տեսնել դրա իրական ազդեցությունը տնտեսության վրա, և հետո նոր գնահատել դրա ճիշտ կամ սխալ լինելը: Իհարկե, գործող օրենսդրական դաշտում կարելի է գտնել թերություններ, բայց, կարծում ենք, դրանց շտկումը դժվար թե լուծի հարկային գործող համակարգի հիմնական խնդիրը՝ հարկատումների կողմից հարկերը վճարելու ցանկության բացակայությունը: Հասկանալի է, որ յուրաքանչյուր հասարակությունում հարկերի վճարումը ցանկալի չէ ցանկացած հարկատուի համար, բայց եթե ընդունվում է պետության դերը տնտեսության կարգավորման գործընթացում, ապա պետք է հստակ գիտակցել, որ պետությունը, իր գործառույթները կատարելու համար, պետք է ունենա միջոցներ, այսինքն՝ հարկերի հավաքագրումն անհրաժեշտություն է: Սակայն ներկայիս պայմաններում հարկատուները չեն ցանկանում հարկեր վճարել, քանի որ իրատես հարկատուի տեսանկյունից այսօր հարկային պարտավորությունների կատարումը նպատակահարմար չէ: